Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

62/4158/ 5 ապրիլի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224
12050
9 771829 222003

## Ա

## «Պահանջում են ինձ վրա հարձակվել»

Քաղաքական եւ միջդետական պրակտիկայում ընդունված վերջնագրերի իմաստը հետեւյալն է. «եթե ԴՈՒ չանես այս բանը, ապա ԵՍ կանեմ այսինչ քայլը»: Այսինքն՝ վերջնագիր ներկայացնողը ունի ուժ եւ հնարավորություն՝ իր պայմանները չկատարելու դեպքում դիմել այս կամ այն քայլի: Օրինակ՝ եթե դու չկանգնես ժողովրդի (այսինքն՝ իմ) կողքին, ես կասեմ, որ դու ժողովրդի թշնամին ես: Այդպիսի սպառնալիք հնչեցնողը իսկապես «ասելու» հնարավորություն ունի: Բայց եթե վերջնագիրը ձեւակերպված է այսպես՝ եթե 5 օրում ԴՈՒ չանես այս բանը, ապա ԴՈՒ պիտի անես այն բանը, դա վերջնագրի, կարելի է ասել, սխալ տեսակն է: Որովհետեւ այդպիսի սպառնալիք ներկայացնողը ոչ մի լծակ չունի ստիպելու դիմացինին այդ՝ երկրորդ քայլն անելու: Ահա այդպիսի՝ տրամաբանորեն սխալ վերջնագրի ձեւակերպմամբ է երեկ հանդես եկել հայոց «գլխավոր արծիվ» Խաչիկ Ասրյանը. եթե 5 օրվա ընթացքում Ադրբեջանի նախագահը ներողություն չխնդրի հայ ժողովրդից, ասում է պարոն Ասրյանը, ապա Ալիեւը պետք է պատերազմ հայտարարի: Պահանջել հակառակորդից, որ նա քեզ վրա հարձակվի, դա, անշուշտ, նոր խոսք է արտաքին քաղաքականության ոլորտում:

Իլհամ Ալիեւը, անշուշտ, ոչ առաջին, ոչ էլ վերջին անգամն է հանդես գալիս հայատյաց ճառերով: Եվ միջազգային մակարդակով մեր պետության եւ քաղաքական ուժերի ներկայացուցիչները, հավանաբար, պետք է երբեմն դրան արձագանքեն: Բայց ի՞նչ իմաստ կա, որ Հայաստանի ներսում մեր որեւէ հասարակական կազմակերպություն այդ առիթով հոխորտա, ես չեմ հասկանում: Ինչի՞ համար եւ ո՞ւմ առաջ ենք մենք մեր քաջությունը ցուցադրում: Բարձրացնում ենք մեր ժողովրդի մարտական ոգի՞ն: Ինձ թվում է, ճիշտ հակառակը՝ ադրբեջանցիները, որպես պարտված կողմ, պետք է հոխորտան եւ սպառնան՝ այդպիսով փորձելով հաղթահարել իրենց բարդույթները: Իսկ մենք հանգիստ եւ համբերատար բացատրենք նրանց, որ պետք է հաշվի նստել ստեղծված իրողությունների հետ, եւ խաղաղ համագոյակցությունը ոչ մի այլընտրանք չունի:

«Արծիվների» հայտարարությունը գրված է այն ոճով, որով նաեւ մեր ներքին կյանքում «ստեղծագործում են» մեր որոշ հրապարակախոսներ եւ գործիչներ. «ոհմակի ֆյուրեր», «սուլթան», «հարեմների ամենացանկալի պարուհի» եւ այլն: Շարունակում եմ պնդել, որ անձնական վիրավորանքները բնութագրում են հենց վիրավորողին ու վկայում են նրա թուլության մասին: Իսկ երբ պարոն Ասրյանը նշում է մեր արիական ծագումը եւ ադրբեջանական ազգի «հորինված» լինելը, դա նշանակում է, որ նա ռասիզմին ռասիզմ է հակադրում:

Բնականաբար, ես չէի անդրադառնա այս հայտարարությանը, եթե դրա հեղինակը չլիներ իշխող կուսակցության՝ ՀՀԿ-ի համամասնական ցուցակում:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Արտաքին գովազդը թանկ է, հարկավոր չի

ԿԸՀ-ն հրապարակել էր այն կուսակցությունների ցանկը, որոնք 5 քառակուսի մետրը գերազանցող արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառներ փակցնելու իրավունք են ստացել: Այդ կուսակցությունների շարքում անգամ հայտ չի ներկայացրել ՀԱԿ-ը: Երեկ Aravot.am-ը ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանից հետաքրքրվեց՝ ի՞նչն է պատճառը, չե՞ք ուզում գովազդվել, նա պատասխանեց. «Դա շատ թանկ է մեզ համար: Այսինքն՝ դա իսկապես բավականին մեծ միջոցներ է պահանջում»: Մեր հարցին՝ ՀԱԿ-ը չունի՞ այդ միջոցները՝ պարոն Զուրաբյանը պատասխանեց, որ ունեն սահմանափակ միջոցներ. «Հաստատ չենք կարող ոտք գցել ոչ Հանրապետական կուսակցության հետ, ոչ «Բարգավաճի», ոչ շատ այլ կուսակցությունների հետ: Հաշվի առեք, որ դուք գործ ունեք մի ընդդիմության հետ, որը 4 տարի շարունակ ենթարկվել է զրկանքների, որի հետ կապված մարդկանց բոլորի կամ նրանց բիզնեսներն են քայքայել, կամ նրանց հեռացրել են աշխատանքից եւ այլն: Ուրեմն մենք պետք է ճշգրիտ օգտագործենք մեր ռեսուրսները եւ կոնկրետ այդ ուղղությամբ չենք օգտագործելու»:



## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### ՌԴ-ի լրագրողական «դեսանտը» Հայաստանում

«Առավոտի» տեղեկություններով՝ այս օրերին Հայաստանում են գտնվում ռուսական շուրջ մեկ տասնյակ առաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչներ, որոնք հանդիպումներ են ունենում Հայաստանի իշխանական վերնախավի հետ: Մասնավորապես, նրանց ընդունել է վարչապետ Տիգրան Սարգսյանը եւ պատասխանել վերջիններիս հետաքրքրող հարցերին: Ասում են, որ ռուս լրագրողների այցը Հայաստան կազմակերպվել է ՌԴ իշխանական վերնախավի անմիջական մտահղացմամբ: Վերջիններս այս կերպ փորձում են շնորհակալություն հայտնել Հայաստանի իշխանություններին՝ ի դեմս նախագահի եւ կառավարության, ՌԴ նախագահական ընտրություններին Վլադիմիր Պուտինին աջակցելու համար:

### Հայտարարեցին, որ միասնական նախընտրական շտաբ են ձեւավորում

Երեկ Քաղաքագետների միությունում քաղաքական հինգ ուժերի՝ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի, «Ժառանգության» ու ՀՅԴ-ի ներկայացուցիչները ստորագրեցին մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների հանրային վերահսկողության միջկուսակցական միասնական ընտրական շտաբ ձեւավորելու մասին հայտարարություն: «Սա կարող է իրականանալ, եթե այս հռչակագիրը ստորագրեն բոլոր կուսակցությունների ղեկավարները՝ սկսած հանրապետության նախագահից, որը Հանրապետական կուսակցության ղեկավարն է»,- երեկ «Ազատություն» ռ/կ-ի հետ զրույցում ասել է հայտարարությունը ստորագրած «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը:

Կարդացեք էջ 3:

Այսուհետեւ թերթի 8-րդ էջում կարող եք կարդալ օրվա հումորը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Իրատես de facto» ակումբի հյուրն է ՀԱԿ ներկայացուցիչ Վահագն Խաչատրյանը:

### Եղանակ

Երեւան +5 +20, Շիրակ -3 +11, Կոտայք -3 +11, Գեղարքունիք -3 +11, Լոռի 0 +19, Տավուշ +2 +21, Արագածոտն լեռներ -3 +11, Արագածոտն նախալեռն. +3 +19, Արարատ +4 +20, Արմավիր +4 +20, Վայոց Ձոր լեռներ -3 +11, Վայոց Ձոր նախալեռն. -4 +20, Սյունիքի հովիտներ +5 +23, Սյունիքի նախալեռներ +2 +17

## Պայքարում են իրենց թիմին առաջ մղելու սկզբունքով

Կուսակցությունները ԱԺ ընտրապայքարում ոչ թե գաղափարներով, այլ ամեն մեկն իր թիմին օգնելու ու առաջ մղելու սկզբունքով են պայքարում: Aravot.am-ի հետ զրույցում նման կարծիք հայտնեց «Ազգային համագործակցություն» հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Սադոյանը: Նրա խոսքերով՝ կուսակցությունները չեն տարբերվում ոչ մոտեցումներով, ոչ էլ գաղափարական առանձնահատկություններով. «Գաղափարական առանձնահատկությունները ոչ միայն չեն շեշտում, այլեւ փորձ է արվում այնպես անել, թե անոթ է դրա մասին խոսելը: Ես սկզբունքային մոտեցումների, գաղափարների տեսակետից տարբերություններ չեմ տեսնում... Եթե ասում ենք բազմակարծությունը օգտակար է երկրին, առաջին հերթին նկատի ունենք տարբեր ճանապարհների առկայությունը, որը հնարավորություն է տալիս ընտրել ամենաարդյունավետը, բայց տարբերություններ չկան, դառնում է կլանային համակարգ՝ քաղաքական դաշտում, դա ողբերգություն է: Ցանկալի կլիներ, որ կուսակցություններում լինեն գաղափարական մոտեցումներ, գաղափարական տարբերություններ, եւ ընտրություններում էլ պայքարը գնա ծրագրերի, գաղափարների, ոչ թե՝ ում թիմն ինչքան մեծաքանակ կողմնակիցներ ձեռք կբերի ու կկարողանա ստիպել իր տեսակետի հետ հաշվի նստել»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ,
ԺԱՄԸ 14:00-ԻՆ

«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ

Հանրահավաքի իրազեկումն ընդունված է ի գիտություն՝ քաղաքապետարանի թիվ 13 որոշմամբ:

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

«Սիվիլիթաս» հիմնադրամը հրավիրում է

«Հարյուր հարց, հարյուր պատասխան»

քննարկումների շարքի հերթական միջոցառմանը:

Այս ամսվա հյուրն է Հայաստանի առաջին արտգործնախարար

Րաֆֆի Հովհաննիսյանը

Քննարկումը կվարի «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արամ Աբրահամյանը

Միջոցառումը տեղի կունենա ապրիլի 10-ին, ժամը 14:00-ին, «Երեւան» հյուրանոցի «Ռոսինի» սրահում:

Մասնակցությունը միայն նախնական գրանցումով՝ 010 500 119:

Տեղերը սահմանափակ են:

Ձեր հարցերը կարող եք նախօրոք ուղղել պրն Հովհաննիսյանին «Սիվիլիթասի» կայքում:

# «Խորհրդարանում ես շատ արդյունավետ եմ աշխատելու»

Հարցազրույց թիվ 10 ընտրատարածքում առաջադրված ԱԺ պատգամավորության թեկնածու Սարիբեկ Սուքիասյանի հետ:



- Մամուլում ակնարկներ եղան, որ Դուք ժամանակին հայտարարել էիք, թե չեք ցանկանում դառնալ պատգամավոր, բայց հիմա, այնուամենայնիվ, խորհրդարանում ներկա լինելու հայտ ներկայացրիք: Ո՞ր գործոններն ազդեցին Ձեր որոշման վրա:

- Ինչպես գիտեք, 2007թ. սկսած՝ դեռեւս նախագահական ընտրությունների նախաշեմին, եղբայրս՝ Խաչատուրը, եւ ամբողջ մեր ընտանիքը հայտնվեց քաղաքական հետապնդումների շրջապտույտում: Ձերբակալվեցին մեզ պատկանող ընկերություններում աշխատող տասնյակ անձինք, ինչ-որ մի պահի ինձ նույնպես ենթարկեցին նախնական կալանքի: Մեզանից, բառիս բուն իմաստով, խլեցին երկու խոշոր ընկերություններ, եւ բավականին մեծ վնաս հասցվեց մեր տնտեսական համակարգերին: Այս ամենը շատ բացասական ազդեցություն ունեցավ մեզ վրա, խաթարվեց մեր ընտանիքի բոլոր անդամների անդորրը:

Բայց պարզվում է, որ դա էլ քիչ համարվեց: Հիմա էլ ոտնահարելով օրենքի տարրական նորմերը՝ Խաչատուր Սուքիասյանին չգրանցեցին որպես ԱԺ պատգամավորության թեկնածու՝ զրկելով նրան ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ընտրվելու իրավունքից: Պատճառը մեզ համար շատ պարզ է՝ իշխանության որոշ ներկայացուցիչներին անհանգստացնում է հասարակության լայն շերտերի վստահությունը Խաչատուրի հանդեպ: Եղբայրս կրահել էր իշխանությունների նախատրամադրվածությունը եւ հորդորեց ինձ առաջադրվել թիվ 10 ընտրատարածքում, որտեղ էլ խորհրդարանում շարունակեմ իրականացնել նրա ծրագրերը, ապահովեմ նախընտրական մրցակցությունը մեր ընտրատարածքում, բավարարեմ ընտրողների սպասումները: Սա նաեւ մեր արժանապատվության հարցն էր:

Ես միշտ տեղյակ եմ եղել Խաչատուրի պատգամավորական գործունեությանը, պարբերաբար ծանոթանում էի նրա օրենսդրական նախաձեռնություններին: Ուզում եմ ասել, որ ես միշտ հետեւել եմ խորհրդարանի աշխատանքներին, գիտեմ տնտեսությանը խոչընդոտող գործոնները, որոնք կարելի է մեղմացնել կամ վերացնել՝ օրենսդրությունը կատարելագործելով:

Ուստի պատահական մարդ չեմ լինելու Ազգային ժողովում եւ ընտրվելու դեպքում աշխատելու եմ շատ արդյունավետ:

- Ձեր գլխավոր մրցակիցն ընտրատարածքում Գարեգին Նուշիկյանն է, որը ՀՀ գլխավոր դատախազի խնամին է: Արդյոք դա Ձեզ չի՞ անհանգստացնում:

- Ոչ, չի անհանգստացնում: Ընտրությունները չեն կարող լինել խնամիական կամ ընկերական հարաբերությունների արտացոլումը: Ցանկացած պետական պաշտոնյա, նաեւ իրավապահ մարմինների բարձրագույն ներկայացուցիչ, ինչպես եւ յուրաքանչյուր քաղաքացի, ընտրության ժամանակ ունենում է մեկ ձայն: Հույս ունեմ, որ իշխանությունները հավատարիմ կլինեն իրենց խոստումին՝ այս անգամ ապահովել ազատ եւ արդար ընտրությունների անցկացում: Ուժային, դատախազական լծակների օգտագործումը ընտրությունների արդյունքների վրա ազդելու նպատակով անթույլատրելի եմ համարում:

- Իսկ ինչպե՞ս եք գնահատում ընտրապայքարում հաղթելու Ձեր շանսերը:

- Գործարարությամբ զբաղվելու, տնտեսական եւ ֆինանսական տարբեր կառույցներ ղեկավարելու հարուստ փորձը ինձ սովորեցրել է ցանկացած նոր գործ սկսելուց առաջ հաշվարկել իմ հնարավորությունները, կարողությունները, վերլուծել իրավիճակը:

Այս դեպքում էլ այդ բոլոր գործողությունները կատարվել են, եւ ես շատ հանգիստ եւ վճռական մտնում եմ ընտրապայքարի մեջ:

Իմ շփումները ընտրատարածքի բնակիչների հետ, իրենց վստահությունն իմ հանդեպ, ինձ օժանդակող լավ պատրաստված թիմը թույլ են տալիս եզրակացնել, որ ես հաղթելու եմ: Ի վերջո, ես հանրությանն անծանոթ անձ չեմ, բազմիցս զանգվածային լրատվամիջոցներով ներկայացրել եմ իմ տեսակետը երկրի քաղաքական եւ սոցիալ-տնտեսական խնդիրների շուրջ, մատնանշել եմ տնտեսության զարգացմանը խանգարող խնդիրները, տարբերակներ եմ առաջարկել այդ խնդիրները լուծելու համար:

- Դուք ՀԱԿ համամասնական ցուցակի առաջին տասնյակում եք, չնայած մինչ այժմ ակտիվ քաղաքականությամբ չեք զբաղվել: Ինչո՞վ եք դա բացատրում:

- Կարծում եմ՝ այդ հարցը նախ եւ առաջ պետք է ուղղել Կոնգրեսի ղեկավարներին: Բազմիցս ասել եմ, որ բարձր եմ գնահատում Հայաստանի առաջին նախագահի ներդրումը մեր երկրի անկախացման, Արցախի ազատագրման հարցում: Իմ ազատական գաղափարներին համահունչ են ՀԱԿ-ի ծրագրերն ու երկրի զարգացման առաջարկվող մոդելները, եւ ես որեւէ անգամ չեմ թաքցրել, որ Կոնգրեսի համակիրն եմ: Նաեւ գիտեք, որ եղբայրս 2008թ. հստակ արտահայտել էր իր քաղաքացիական դիրքորոշումը, կանգնել էր ժողովրդի կողքին: Այդ իսկ պատճառով չի կարելի պատահական համարել իմ ներգրավումը Կոնգրեսի նախընտրական ցուցակում: Նշեմ նաեւ, որ իշխանության թեւերը միշտ պետք է հակակշռված լինեն: Ուրեմն, խորհրդարանում խիստ անհրաժեշտ են անկախ եւ ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքական եւ տնտեսական գործիչներ. դա բխում է եւ երկրի, եւ քաղաքացիների շահերից:

# ԲՀԿ-ն այս ընտրություններում էլ ամենաշատը կծախսի

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախօրեին հաստատել է 5 քառակուսի մետրը գերազանցող արտաքին գովազդային վահանակներ, քարոզչական պաստառներ փակցնելու իրավունքը՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցողների միջեւ: Ըստ այդմ, Հանրապետական կուսակցությունը վահանակների համար կունենա 100 տեղ, «Ժառանգությունը»՝ 50, ՕԵԿ-ը՝ 64, ԲՀԿ-ն՝ 164, ՀՅԴ-ն՝ 38:

«Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ, պատգամավոր Անահիտ Բախշյանը երեկ Aravot.am-ի հետ զրույցում կասկածի տակ էր առել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական ծախսերի համապատասխանելիությունը թույլատրելի չափերին: Այդ առիթով Aravot.am-ի հետ զրույցում ԲՀԿ մամուլի խոսնակ Խաչիկ Գալստյանն ասաց, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը քարոզչական նյութերի եւ պաստառների վրա ծախսելու է այնքան, ինչքան որ թույլատրված է օրենքով. «Եվ ոչ մի լումա ավելի»:

Տիկին Բախշյանի մտահոգություններին, որ մյուս կուսակցությունների համար անհավասար ընտրապայքար են ստեղծում, իշխող կուսակցությունների գովազդն ավելի շատ է ստացվում, ԲՀԿ մամուլի խոսնակը հակադարձեց. «Մենք քարոզչությանը շատ լուրջ ենք վերաբերվում: Իսկ քարոզչության շատ լինելը նաեւ լրատվամիջոցների հետաքրքրության արդյունք է՝ մեր քաղաքական ուժի նկատմամբ»:



ԲՀԿ խոսնակը հակադարձեց. «Թող շատ չմտահոգվեն եւ փաստերով խոսեն»: Aravot.am-ի դիտարկմանն էլ՝ ինչպե՞ս է ստացվում, որ թույլատրելի դրամաշրջանառության սահմաններում, այնուհանդերձ,

Ի դեպ, նախորդ ընտրությունների փորձը ցույց տվեց, որ ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն խախտել էին Հայաստանի օրենսդրությամբ նախընտրական քարոզարշավի ծախսերի համար սահմանված նվազագույն՝ 60 մլն դրամի շեմը: «Տարածաշրջանային զարգացման կենտրոն-Թրանսփարենսի ինթերնեյշնլ Հայաստան» հասարակական կազմակերպությունը 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ՝ իրականացրել էր կուսակցությունների նախընտրական քարոզչության եւ վարչական ռեսուրսների չարաշահման մոնիտորինգ: Ըստ այդ հետազոտությունների՝ միայն Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում իրականացված քարոզարշավի վրա ՀՀԿ-ն ծախսել էր 79,1 մլն դրամ, ԲՀԿ-ն՝ 129,6 մլն, ՀՅԴ-ն՝ 50,7 մլն, ՕԵԿ-ը՝ 33,1 մլն, իսկ «Ժառանգությունը»՝ 24 մլն դրամ:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Քաղաքական չորս ուժերը միասնական շտաբ են ձեւավորում

## Դեմկուսում ասում են, որ իրենք անկոչ հյուր չեն, Կոմկուսում էլ՝ որ «այդ բուկետից տհաճ հոտ է գալիս»





Երեկ Քաղաքագետների միությունում քաղաքական հինգ ուժերի՝ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի, «Ժառանգության» ու ՀՅԴ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած քննարկումները, պարզվեց՝ շատ բեղմնավոր են եղել: Համենայնդեպս, ինչպես երեկ փոխանցում էին լրատվամիջոցները, այդ քննարկման արդյունքում երեք կարեւոր բան է տեղի ունեցել. նախ՝ իրար ձեռք են սեղմել ՀԱԿ-ի եւ ՀՅԴ-ի ներկայացուցիչներ Լեւոն Զուրաբյանն ու Արմեն Ռուստամյանը: Երկրորդ՝ Արմեն Ռուստամյանը թեեւ միակն է եղել, բայց ստորագրել է քննարկմանը ներկա կուսակցություններին Լեւոն Զուրաբյանի առաջարկած փաստաթուղթը, որն ուղղվելու է ՀՀ ոստիկանապետ Վովա Գասպարյանին՝ վերջինիս խնդրելով տրամադրել երկրից մշտապես բացակա, բայց ընտրացուցակներում ընդգրկված քաղաքացիների ցանկը: Մյուս ուժերը, այդ թվում՝ ԲՀԿ-ն ու «Ժառանգությունը», իրենց խոսնակների միջոցով «Առավոտին» փոխանցեցին, որ այդ փաստաթղթին միանալու հարցը դեռ չեն քննարկել: Եվ վերջապես, երրորդ՝ բացառությամբ ՀՀԿ-ի, մյուս բոլոր չորս ուժերը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որով հռչակել են մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների հանրային վերահսկողության միջկուսակցական միասնական ընտրական շտաբ ձեւավորելու մասին:

Իսկ հայտարարության մեջ մասնավորապես ասված է. «Մենք՝ Հայաստանի Հանրապետության 5-րդ գումարման Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչներս, գիտակցելով Հայաստանի առջեւ ծառացած բարդ խնդիրների բարեհաջող հանգուցալուծման համար մայիսի 6-ին կայանալիք ընտրությունները ազատ, արդար, թափանցիկ, եվրոպական չափանիշներին հարիր անցկացնելու նշանակությունը, կարեւորելով այդ գործում հանրության եւ քաղաքական կուսակցությունների ջանքերը միաբերելու անհրաժեշտությունը՝ համաձայնվում ենք ձեւավորել ընտրությունների հանրային վերահսկողության միջկուսակցական միասնական ընտրական շտաբ»: Շեշտվել է նաեւ, թե հայտարարությունը բաց է համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերի համար, իսկ ինչպես հայտնի է, առաջիկա ընտրություններին, բացի այս կուսակցություններից, մասնակցելու հայտ են ներկայացրել նաեւ Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, Կոմկուսը, «Միավորված հայեր» կուսակցությունն ու ՕԵԿ-ը:

«Օրինաց երկրի» մամուլի խոսնակն «Առավոտին» փոխանցեց, թե կուսակցությունում միասնական շտաբին միանալ-չմիանալու հարց չեն քննարկել, հարցին՝ հնարավո՞ր է, որ առաջիկա օրերին քննարկվի, ՕԵԿ-ի մամուլի խոսնակը ոչ մի հստակ բան չասաց: Ինչ վերաբերում է Դեմկուսին, ապա վերջինիս առաջնորդ Արամ Սարգսյանը մեր հարցին՝ հնարավո՞ր է, որ միանան այս հայտարարությանն ու ընդգրկվեն միասնական շտաբում, ասաց. «Այն ժամանակ, երբ առաջին անգամ խոսվեց միասնական շտաբ ձեւավորելու մասին, մենք հայտարարեցինք, որ շահագրգիռ ենք այդ հարցում եւ պատրաստ ենք մեր մասնակցությունը բերել դրան: Այս դեպքում մենք անկոչ հյուր չենք, էլի. եթե մեզ առաջարկություն արվի՝ կքննարկենք այդ հարցը»:

Մեր հիշեցմանը, թե՝ հայտարարությունը բաց է ընտրություններին մասնակցող բոլոր ուժերի համար, Դեմկուսի առաջնորդն այսպես արձագանքեց. «Եթե չորսը միասին արդեն հայտարարություն են անում՝ կնշանակի, որ կարող էին եւ հինգերորդին, եւ վեցերորդին ու յոթերորդին էլ հրավիրել: Ի՞նչ է նշանակում՝ հայտարարությունը բաց է: Եթե նախաձեռնություն է՝ թող լիներ ընդհանուր, ի՞նչ էր պատահել»: Այդուամենայնիվ, Արամ Սարգսյանը հավելեց, թե կփորձեն պարզել, թե դա ինչ փաստաթուղթ է եւ ինչ են առաջարկում այն արդեն ստորագրած ուժերը:

ՀԿԿ 1-ին քարտուղար Ռուբեն Թովմասյանն էլ անդրադառնալով քաղաքական չորս ուժերի համատեղ ստորագրած հայտարարությանը՝ ասաց, թե, իր ձեւակերպմամբ՝ «այն գզվռտոցից», որը տեսել է հեռուստատեսությամբ, իր համար այդպես էլ պարզ չի դարձել՝ հայտարարությունն, ի վերջո, ստորագրվե՞լ է, թե՞ ոչ: Մեր դրական պատասխանից հետո էլ ի հավելումն նկատեց. «Ի՞նչ է՝ ընտրյալնե՞րն էին հրավիրվել: Թող ինձ էլ հրավիրեին՝ մասնակցեի քննարկմանը: Այդ բուկետից շատ տհաճ հոտ է գալիս»:

Մեր ճշտող հարցին, թե դա նշանակո՞ւմ է, որ ՀԿԿ-ն մտադիր չէ միանալ այս հայտարարությանն ու միասնական ընտրական շտաբին, Կոմկուսի առաջնորդն արձագանքեց. «Ես դեռ չգիտեմ, թե այդ հայտարարության մեջ ինչ է գրված: Ես միայն տեսա, որ իրենք էլ իրար հետ համաձայն չէին, մեկը՝ այս, մյուսը այն նախադասության հետ»:

Իսկ միասնական ընտրական շտաբ ստեղծելու գաղափարին Ռուբեն Թովմասյանը, պարզվեց՝ համաձայն է. «Գաղափարն ինքը վատը չի, բայց դա այդ չորս ուժերի սահմանափակմամբ չպետք է արվեր: Այսինքն՝ ասում են՝ մենք ենք որ կանք, իսկ մյուսներին կարող ենք չհրավիրե՞լ, հայտարարությունը կուղարկենք՝ կստորագրեն, էլի, ո՞նց կարող է չստորագրեն: Այդ բնույթի միջոցառումն այնպես պետք է կազմակերպվեր, որ բոլորս ներկա լինեինք, մասնակցեինք քննարկմանը: Վաղը եթե ես մի նախադասության հետ համաձայն չլինեմ՝ արդեն ստորագրված փաստաթղթի վերաբերյալ ի՞նչ վերաբերմունք պիտի ցուցաբերեմ: Սա հասարակ բան է: Բայց ինչո՞ւ հիմա ես դրան պիտի միանամ, իրենց կցո՞րդն եմ, ինչ եմ... Կրկնում եմ՝ այդ բուկետից տհաճ հոտ է գալիս»:

Թե ինչ մեխանիզմներ են մշակելու միասնական ընտրական շտաբ ձեւավորելու մասին հայտարարած քաղաքական հիշյալ ուժերը ընտրությունները վերահսկելու եւ կեղծիքներ թույլ չտալու համար՝ հայտարարության տեքստում ոչինչ չի ասվում: Դրանք, ըստ ամենայնի, ապագա քննարկումների առարկա պիտի դառնան, իսկ որ քննարկումներ առաջիկայում դեռ լինելու են, իրենք՝ հայտարարությունը ստորագրած ուժերն են խոստացել. միասնական շտաբի նիստը՝ ապրիլի 11-ին:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# «Օսկանյանն այս տարիների ընթացքում ոչինչ չի սովորել»



«Նախկին արտգործնախարարի մոտ դեռեւս նախարար եղած ժամանակներից բնավորության գիծ կար՝ անհաջող հայտարարություններ անել, հետո նույնքան անհաջող կերպով բացատրություններ տալ՝ վատ վիճակի մեջ դնելով եւ իրեն, եւ գերատեսչությանը»,- Aravot.am-ի հետ զրույցում ասաց ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը՝ անդրադառնալով նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի՝ կոալիցիայի վերաբերյալ իր նախկին հայտարարության առիթով տված մեկնաբանություններին:

Հիշեցնենք, որ ի պատասխան լրագրողների հարցերի՝ Վարդան Օսկանյանն ասել էր. «Ես ասել եմ՝ այն, ինչ որ այսօր Հայաստանում կա՝ քաղաքագիտական իմաստով ֆորմալ է, բայց նույն զրույցում երբ հարցրել են՝ ինչու դուրս չի եկել, ասել եմ՝ այն, ինչին ես չեմ մասնակցել՝ չեմ կարող գնահատական տալ: Ես կոալիցիայի իմաստը բացատրել եմ զուտ քաղաքագիտական իմաստով, այսինքն՝ իրոք, թե այս տարիներին ինչ հարաբերություն է եղել կոալիցիոն անդամների մեջ, ես չեմ մասնակցել եւ չեմ կարողանա գնահատական տալ»:

Ըստ Շարմազանովի՝ փաստորեն, ժամանակներն Օսկանյանին չեն փոխել, եւ որպեսզի ավելի տպավորիչ լինի, ՀՀԿ մամուլի խոսնակը նաեւ օրինակներ բերեց. «Դեռեւս 2007-ին նա ԱԺ-ում հայտարարում էր, որ ճանաչում է Կարսի պայմանագիրը, այնուհետեւ բավականին անհաջող բացատրություններ էր տալիս, թե ինչը նկատի ունի, ազատագրված տարածքները անվանում էր «օկուպացված»՝ հետագայում փորձելով արդարանալ, իրականում ավելի խճճելով իրավիճակը, հայտարարում էր, թե բանակցում է Թուրքիայի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հետ, խոսում էր ղարաբաղյան խնդրում Թուրքիայի ներգրավվածության մասին, այնուհետեւ դարձյալ անհաջող կերպով փորձում էր բացատրել, թե ինչն է նկատի ունեցել: Այս ամենը մի բան են ցույց տալիս՝ նախկին արտգործնախարարը ոչինչ չի սովորել, եւ ոչինչ էլ չի մոռացվել»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### «Եթե կոալիցիան ձեւական է, թող դուրս գան»

Այսօր Aravot.am-ը ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանից հետաքրքրվեց՝ Քաղաքագետների միությունում չստորագրեցիք միասնական շտաբ ստեղծելու փաստաթուղթը՝ շեշտելով, թե կոալիցիա էլ դեռ կա, մինչդեռ ձեր կոալիցիոն գործընկերների, մասնավորապես՝ ԲՀԿ-ի որոշ անդամներ պնդում են, որ կոալիցիան ձեւական բնույթ ունի եւ ըստ էության չկա կոալիցիա: Հարցին՝ գուցե պետք չէ՞ անհանգստանալ նրանց կարծիքը հաշվի չառնելու համար՝ նա պատասխանեց. «Բարգավաճ Հայաստանը» նման հայտարարություն չի արել: Նման հայտարարություններն անում են կուսակցության նախագահները: Եվ բացի այդ, եթե ձեւական է, չի եղել՝ կոալիցիայից դուրս կարող են գալ: Դա Վարդան Օսկանյանի տեսակետը չի: Ես որեւէ մեկի տեսակետի վրա չեմ էլ ուզում ազդեցություն ունենալ: Կոալիցիոն ցանկացած քաղաքական ուժ, եթե կգտնի ձեւական է կամ չկա՝ թող դուրս գա: Վարդան Օսկանյանը ասում է, որովհետեւ գիտի՝ մեծամասնություն ենք, չի մտածում, որ ԲՀԿ-ն՝ 4, ՕԵԿ-ը՝ 3 կառավարության անդամներ են ունեցել, եթե ձեւական է՝ կառավարության նիստերի ժամանակ ինչ-որ քննարկումներ հակառակ ձեւով թող գնային: Ես կարծում եմ՝ կոալիցիան լավ է աշխատել, համատեղ է աշխատել: Եվ ինչ-որ սկզբունքներ էլ որ վեճի առարկա են դարձել՝ կարողացել ենք հաղթահարել»:

Հ. ՁԵԲԵՋՅԱՆ

# Ձյուն ճեղքող ամենագնաց մեքենան Գյումրի հասավ գարնան կեսին

Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը նախընտրական այս շրջանում շիրակցիներին ձնագնաց մեքենա նվիրեց ու մի քանի փրկարարների պարգեւատրեց:

Պաշտոնական քարոզարշավի մեկնարկից 4 օր առաջ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը Գյումրի էր եկել իրենց գործում աչքի ընկած փրկարարներին 50-հազարական դրամով պարգեւատրելու ու Շիրակի մարզին ամենագնաց մեքենա նվիրելու համար: Նշենք, որ տեխնիկայի այս միջոցը օդ ու ջրի պես էր անհրաժեշտ Շիրակի մարզին. այս մարզը հանրապետության բացառիկ տեղանքներից է, որտեղ տարվա 8 ամիսը խորը ձմեռ է, Աշոցքի ու Ամասիայի ճանապարհները «հավերժ» փակ են, նույնիսկ մահվան դեպքեր են արձանագրվում, քանի որ շտապօգնության մեքենաները չեն կարողանում փրկության հասնել: Տարիներ առաջ նման մի դեպք գրանցվեց Արփա լճի ափին գտնվող Բերդաշեն սահմանամերձ գյուղում. մահացողը հղի կին էր: Ի դեպ, նկատենք, որ Արփա լճի ափին կառուցվող Ազգային պարկը հենց Բերդաշենում է տեղակայված, որը թեեւ պատրաստվում են տուրիստական գոտի դարձնել, սակայն ճանապարհներն այնպիսին են, որ նույնիսկ ամռան շոգին առանց ուղեղի ցնցումների հնարավոր չէ տեղ հասնել: Այս ամենը քաջ գիտակցելով՝ Արմեն Երիցյանը երեկ, ի ցույց շիրակցիների, ամենագնաց մեքենան կանգնեցրեց Գյումրու կենտրոնում՝ Արվեստների ակադեմիայի դիմաց: Սակայն գյումրեցիները ուրախանալու փոխարեն՝ սկսեցին մտորել, թե ինչո՞ւ ձյուն ճեղքող ամենագնաց մեքենան մարզ հասավ գարնան կեսերին, եւ ինչո՞ւ հենց այս նախընտրական շրջանում: Լրագրողները նախարարից հետաքրքրվեցին, թե արդյոք ուշացած չէ՞ շիրակցիների նվերը, եւ մի՞թե սա ՕԵԿ-ի նախընտրական քարոզարշավի շրջանակներում չէ:



«Միշտ էլ կարելի է ասել՝ ուշացել ենք, բայց մենք անում ենք էն, ինչ կարող ենք անել, եւ պարզվում է, որ եթե դա անեինք մեկ տարի առաջ, էլի ուշացած կլիներ, կասեիք՝ անցած ձմեռ անեիք: Մի խոսքով՝ թող ուշացած լինի, բայց մենք մեր պարտքը կատարում ենք եւ պետք է ավելի շատ տեխնիկապես օգնենք ձեզ բոլորիդ»,- ասաց նախարարը: Նա չհամաձայնեց լրագրողների այն ձեւակերպմանը, թե սա նախընտրական նվեր է, որը արվում է ՕԵԿ-ի ընտրազանգվածին ոգեւորելու համար: «Իմ այցը նախընտրական չէ, յուրաքանչյուրս պետք է գիտակցենք, որ փրկարարը պիտի փրկի բոլորին, կուսակցական բոլոր՝ էսպես ասած, քարոզչական աշխատանքները պետք է դնենք մի կողմ եւ մենք պետք է կարողանանք փրկարարական աշխատանքով զբաղվել, եւ ազգաբնակչությունը դա պետք է զգա, պետք է զգա, որ դա ընդամենը անում ենք ժողովրդի համար: Ես չեմ կարծում, որ մենք պետք է կապենք ընտրությունների հետ, ամեն ինչ չի կարելի կապել ընտրությունների հետ»,- շարունակեց Արմեն Երիցյանը: Լրագրողներից մեկը շարունակեց համառորեն պնդել, թե ինչո՞ւ Ծաղկուտ գյուղում ու Աղվորիկում ձնաբքի տակ մնացած հիվանդ երեխային ու հղի կնոջը փրկած աշխատակիցներին պարգեւատրեցին քարոզարշավից մի քանի օր առաջ, եւ ինչո՞ւ նախկինում չէին մտածում պարգեւատրումներ անելու մասին: Ի պատասխան՝ նախարարը նեղսրտեց, թե նեղ բյուջեից մի կերպ հարմարեցնում ու պարգեւատրումներ են անում, եւ պետք չէ ընտրությունների հետ կապել: Նա նաեւ վստահեցրեց, որ իր՝ նախարար լինելու երկու տարվա ընթացքում բազմիցս խրախուսել է իրենց գերատեսչության աշխատակիցներին:

«Առավոտ»-ը ՕԵԿ-ի համամասնական ցուցակում գտնվող Արմեն Երիցյանից հետաքրքրվեց, թե պատգամավոր ընտրվելու դեպքում օրենսդիր աշխատա՞նքը կգերադասի, թե՞ գործադիրը:

«Ընդհանրապես ես գերադասում եմ գործադիրը, բայց եթե իմ կուսակցությունը որոշի, որ ես պետք է օրենսդիր լինեմ, կարծում եմ, որ իմ խելքն ու իմտությունը հերիքում են, որովհետեւ ես իրավաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր եմ եւ կարող եմ օգտակար լինել որպես օրենսդիր մարմնի ներկայացուցիչ, բայց իմ տեսլականը գործադիրն է»: Ի դեպ, թե՛ նախարարը եւ թե՛ մարզային իշխանությունների ներկայացուցիչները մի քանի անգամ շեշտեցին, որ Արմեն Երիցյանը Շիրակի մարզպետ Աշոտ Գիզիրյանի մոտ ընկերն է, 30 տարվա մտերիմը, սակայն նշենք, որ ամենագնաց մեքենայի ցուցադրաբար հանձնելու արարողությանը Աշոտ Գիզիրյանը չէր մասնակցում, նախարարին դիմավորելու էր եկել փոխմարզպետ Սեյրան Պետրոսյանը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## «Մաքուր ջուրը» կդիմի՞ դատարան

Այսօր «Մաքուր ջուրը» պաշտոնապես կհայտարարի՝ դիմելո՞ւ է դատարան Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումը բողոքարկելու համար, թե՞ ոչ: Մոտ մեկ շաբաթ առաջ ՄԳԱ Վոթըր ընկերությունը, որը հայտնի է իր «Մաքուր ջուրը» ապրանքանիշով, տուգանվել է անբարեխիղճ մրցակցության համար՝ 5 միլիոն դրամով: «Առավոտի» հետ զրույցում «Մաքուր ջրի» ներկայացուցիչն ասաց, որ իրենք հանձնաժողովի որոշման մի շարք կետերի հետ միանշանակ համաձայն չեն:

Նշենք, որ հանձնաժողովը «Մաքուր ջրին» տուգանել էր սպառողներին մոլորեցնելու համար, քանի որ հայտնաբերել էր, որ այդ ջուրը շշալցնում է քաղաքային ջրամատակարարման ցանցից, այլ ոչ թե Գառնու սառնորակ աղբյուրից, ինչպես որ մակնշված է ընկերության պիտակի վրա: Սրան էլ ի պատասխան՝ ընկերությունը հայտարարել է, որ Հայաստանում շշալցված բնական աղբյուրի խմելու ջրի վերաբերյալ տերմիններ եւ ցուցանիշներ (քիմիական կազմը) սահմանող ազգային ստանդարտներ չեն գործում: Ուստի իրենք հումքային ջրի ծագման մասին միշտ տվել են ճշգրիտ տեղեկություններ: «Այն, որ ասում են ծորակի ջուր, դա այլ հասկացություն է: Մենք ֆիլտրացված ջուր ենք լցնում»,- մեզ հետ զրույցում ասաց ընկերության ներկայացուցիչը: Մեր այն դիտարկմանն էլ, որ այդ դեպքում մակնշեիք ծորակի ֆիլտրացված ջուր, որպեսզի սպառողն էլ տեղյակ լիներ, թե ինչ է օգտագործում, ընկերությունից ասացին. «Այսօր մանրամասն տեղեկություններ կտրամադրենք մեր հետագա քայլերի մասին»: «Մաքուր ջրից» նաեւ հավելեցին, որ ջրի ստանդարտների կամ ծորակի ջուր սահմանման վերաբերյալ այդ բոլոր հարցերը դատական կարգով կպարզվեն:

Երեկ հանձնաժողովից մեզ վստահեցրին, որ ընկերության բողոքարկման վերաբերյալ վարչական բողոք չեն ստացել:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Կուսակցություններին հրավիրել էին հարցուփորձի

ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՕԵԿ-ը, ՀԱԿ-ն ու «Ժառանգությունը» նոր խորհրդարան անցնելու դեպքում կպայքարե՞ն, որ ծխախոտից, ալկոհոլային խմիչքից ու բջջային կապից լրացուցիչ հարկ գանձվի, որպեսզի այդ գումարներն ուղղվեն առողջապահության ոլորտ:

Այսօր ՀՀ քաղաքացին իր առողջապահական ծախսերի 60-65%-ը կատարում է սեփական գրպանից, մինչդեռ զարգացող երկրների պրակտիկայում գումարների մեծ մասը պետք է պետությունը հատկացնի, եւ մի օպտիմալ գումար մնա քաղաքացու վրա: Օրինակ՝ Ուկրաինայում առողջապահական ծախսերի 25%-ն է մարդն իր միջոցներից դնում, մնացածը հոգում է պետությունը: Այստիսի տվյալներ հրապարակեցին Մոր եւ մանկան առողջության հայկական դաշինքի մասնագետները:



Մտահոգվելով մեր երկրում մոր եւ մանկան առողջության պահպանման խնդիրներով՝ երեկ «Կոնգրես» հյուրանոցում դաշինքի նախաձեռնությամբ քննարկում էր կազմակերպվել, որին հրավիրված էին քաղաքական 6 կուսակցություններ: Կլոր սեղանի նպատակն այն էր, որպեսզի ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՕԵԿ-ի, ՀԱԿ-ի, ՀՅԴ-ի եւ «Ժառանգության» ներկայացուցիչները պատասխանեն առողջապահական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների բարձրացրած հարցերին, ինչպես նաեւ ներկայացնեն իրենց քաղաքական ծրագրերը՝ ուղղված Հայաստանում մոր եւ մանկան առողջության պահպանմանը: Կուսակցություններին այս միջոցառմանը ներգրավելու նպատակներից մեկն էլ այն էր, որ պարզեին՝ քաղաքական կուսակցությունները նոր խորհրդարանում մտադի՞ր են արդյոք առողջապահության ոլորտին հատկացվող գումարները ավելացնելու համար այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների հարցը բարձրացնել: Նշենք, որ խոսքը մասնավորապես՝ վերաբերում է առաջին անհրաժեշտության ապրանքներ չհանդիսացող ծխախոտից, ալկոհոլային խմիչքից եւ անառողջ սննդից լրացուցիչ հարկ գանձելուն: Դաշինքի մասնագետների կարծիքով՝ լրացուցիչ պետք է հարկվի նաեւ բջջային կապը, սակայն ոչ թե օպերատորները պիտի ավելի գումար վճարեն, այլ բաժանորդի հաշվից այդ գումարը պետք է պահվի: Մասնագետները հաշվարկել ու պարզել են, որ բջջային կապի 2,8 միլիոն բաժանորդ ունեցող մեր երկրում եթե յուրաքանչյուր բաժանորդի հաշվից ամսական 50 դրամ գանձվի, ապա միայն այս մասով բյուջեն 1,7 միլիարդ դրամ եկամուտ կմտնի: Այդ գումարներն էլ կուղղվեն առողջապահական ոլորտ: Ներկայումս ՀՆԱ-ի 1,6%-ն է բաժին ընկնում առողջապահությանը, մինչդեռ դաշինքի անդամները գտնում են, որ առնվազն 2,5%-ը պետք է բաժին հանել այս կարեւոր ոլորտին:

Ինչ վերաբերում է բուժծառայությունների հասանելիությանը եւ այս ոլորտում կադրային քաղաքականությանը, ապա առողջապահական ուղղվածությամբ «Հավատ» հասարակական կազմակերպության ղեկավար Սուսաննա Հարությունյանը մտահոգություն հայտնեց, որ մարզերում կադրերի պակաս կա, եւ կուսակցություններին առաջարկեց այս կարեւոր հարցն անպայման ներառել նախընտրական ծրագրերում եւ քաղաքականություն մշակել, թե ինչ եղանակներով երիտասարդ կադրերին տանեն մարզեր՝ աշխատելու:

«Ժառանգության» անդամ Անահիտ Բախշյանն անդրադառնալով այս ոլորտում, նրա բնորոշմամբ, «գումարների անտեղի ու անհասցե վատնելու» երեւույթին՝ ասաց. «Մեզ մոտ օրենսդրական դաշտը վատը չէ, սակայն պակասում է հասցեականությունը: Այսինքն՝ այդ գումարները արդյունավետ չեն ծախսվում, հատկապես մանուկների առողջության մասով: Ես բազմաթիվ փաստեր ունեմ եւ կոնկրետ դեպքերի մասին եմ ասում: Խնդիրն այն է, թե ինչպես անել, որ այդ գումարները հասցեական տեղ հասնեն»:

«Ժառանգության» ներկայացուցիչը վստահեցրեց, որ եկող խորհրդարանում հենց այս հարցն էլ պահելու են իրենց ուշադրության կենտրոնում:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչ Թամար Պողոսյանը թեեւ կարեւոր համարեց դաշինքի բարձրացրած հարցերը, սակայն հայտնեց, որ իր կուսակցության կոլեգիալ նիստից հետո միայն կարող է ասել՝ նման հարցեր կընդգրկե՞ն իրենց առաջիկա անելիքներում, թե՞ ոչ:

Հանրապետական Արա Բաբլոյանը, որը ԱԺ Առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է, ասաց՝ ՀՀԿ-ն մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել մոր եւ մանկան առողջության պահպանման հարցերը, եւ հաջորդ խորհրդարանում էլ նրա ծրագրի կարեւոր դրույթներից մեկը հենց այդ ոլորտին է նվիրված:

Առողջապահության ոլորտին ուղղելու նպատակով այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրներից՝ ծխախոտից, ալկոհոլային խմիչքից ու բջջային կապից լրացուցիչ հարկեր գանձելու մասին էլ պարոն Բաբլոյանն ասաց, որ այդ հարցերը պետք է քննարկվեն, չնայած ինքը կողմ է նման մոտեցմանը:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

Ա aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 5.04.2012

# Պաշտպանի զեկույցը ապացուցման պարտականություն չունի

Երեկ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը ներկայացրեց 2011թ. տարեկան զեկույցը: Մարդու իրավունքների պաշտպանը հորդորեց չվարկաբեկել այն, ակնարկելով, որ ինքը չի ներկայացնում որեւէ կլանի շահեր, մասնավորապես չի ընդունում պետական մարմինների ղրկված պատասխանները, որոնք տրվում են իրենց բարձրացրած հարցերին: Պաշտպանի 2011թ. զեկույցում մարդու իրավունքներին առնչվող խնդիրները դասակարգված են 25 պետական մարմինների գործունեության ոլորտում, ըստ զեկուցողի՝ «25 բաժիններն արտացոլում են յուրաքանչյուր մարմնի իրավասությունների տիրույթում արձանագրված բացթողումներն ու թերացումները, որոնց հետեւանքով ոտնահարվել են մարդկանց իրավունքները»: Պաշտպանը զգուշացնում է, որ իր զեկույցն անհարկի չի ծանրաբեռնել մասնավոր դեպքերով, մանրամասներով, ինչը միջազգային չափանիշներին բնորոշ է եւ դրանք ապացուցման պարտականություն չունեն: Պաշտպանն անդրադարձել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի, արդարադատության, բնապահպանության, առողջապահության, պաշտպանության նախարարություններին, դատախազությանն ու հատուկ քննչական ծառայությանը, ոստիկանությանն ու տեղական ինքնակառավարման մարմիններին: Պաշտպանն արձանագրել էր, որ աճել է, մասնավորապես, ՀՀ առողջապահության ոլորտում կեղծ դեղեր կամ դեղանյութեր ներմուծելու վտանգը, նախարարությունը որեւէ լրացուցիչ մեխանիզմ չի նախատեսել այդ վտանգը նվազեցնելու, դեղերի շուկայում այդ ուղղությամբ վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով: Պաշտպանն անդրադարձել է «բժշկական սխալ» հասկացության վիճարկելիությանը. «Քանի որ օրենսդրությամբ չի սահմանվել «բժշկական սխալ» հասկացությունը, այդ պատճառով էլ չի տարբերակվում անփութությունը բժշկական սխալից, որն էլ իր հերթին դժվարացնում է գնահատական տալ կատարված դեպքին»: Առանձին անդրադարձ կար 2011թ. հունվարի 1-ից ներդրված մինչեւ 7 տարեկան երեխաների անվճար հիվանդանոցային բուժօգնության հավաստագրին եւ երեխայի առողջության անձնագրին, ինչը բերել է մինչեւ 7 տարեկան երեխաների անվճար բուժօգնության համար սահմանված սերտիֆիկատի գոյության դեպքում լրացուցիչ, հավելյալ վճարումների:




Պաշտպանության ոլորտի հետ կապված՝ պաշտպանության նախարարության «թեժ գծով» ստացվել է 1370 ահազանգ, որից 650-ին տրվել է ընթացք, դրանք ստացել են դրական լուծում, իսկ մնացած 720-ը գրանցվել է որպես կեղծ ահազանգ: Պաշտպանը սա համարել է դրական զարգացում: Իսկ ինչ վերաբերում էր զինված ուժերում առկա թերություններին, պաշտպան Կ. Անդրեասյանն արձանագրել էր, որ ժամկետային զինծառայողներից ստացվել են բազմաթիվ բողոքներ այն մասին, որ որեւէ կարգապահական տույժ չունեցող զինծառայողներ՝ օրենքով սահմանված ծառայության 24 ամիսը լրանալուց հետո, չեն զորացրվել, ինչը պատճառաբանվել է օրենքից չբխող տարբեր հիմնավորումներով: Ինչ վերաբերում է տարկետում ստացած անձանց, ապա Կ. Անդրեասյանն արձանագրել էր. «Առողջական վիճակի պատճառով տարկետում ստացած անձանց տարկետման ժամկետից շուտ պարտադրվել է ներկայանալ կրկնակի փորձաքննության»: Ի դեպ, ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումներով անցած տարի զինվորական ծառայության համար ոչ պիտանի է ճանաչվել եւ ՀՀ զինված ուժերից վաղաժամկետ զորացրվել է 500 ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայող: Ըստ պաշտպանի՝ «Նման թվաքանակով վաղաժամկետ զորացրելու փաստը վկայում է այն մասին, որ անձանց զորակոչելիս մանրակրկիտ բուժհետազոտության արդյունավետ կազմակերպումը զինկոմիսարիատներին չի հաջողվել»:

Պաշտպանի զեկույցը ոչ պատահական սկսվում է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունում հայտնաբերված թերությունների մատնանշմամբ: Պաշտպանը նկատել էր, որ դեռեւս կարգավորված չէ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի եւ մասնագիտական հիվանդությունների հետեւանքով անձի կյանքին եւ առողջությանը պատճառված վնասի հատուցում ստացող այն անձանց խնդիրները, որոնց պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004թ. օգոստոսի 1-ից հետո: Թեեւ, ըստ պաշտպանի, 2009թ. հանրապետության մարզերի 937 համայնքում իրականացվել են վերապատրաստումներ գործող խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովների համար, այնուհանդերձ, այդ հանձնաժողովների գործունեությունն արդյունավետ չի եղել: Միջոցներ չեն ձեռնարկվել ռիսկային խմբերի երեխաների խնդիրների կանխարգելման ուղղությամբ: Առանձին դեպքերում հանդիպում են նաեւ որեւէ ծրագրում չընդգրկված թափառաշրջիկ եւ մուրացիկ երեխաներ: Դրական զարգացումներ էլ են եղել, ըստ պաշտպանի՝ ընտանեկան նպաստի համակարգում տվյալների ստուգման արդյունքում 17 հազար ոչ անապահով ընտանիքներ կորցրել են ընտանեկան նպաստի իրավունքը, փոխարենը շուրջ 9 հազար ընտանիք ճանաչվել է կարիքավոր եւ ընդգրկվել համակարգում: Կենսաթոշակայինում էլ ճշգրտվել է 65 հազար անհատական գործ, վերականգնվել են գրեթե 5 հազար կենսաթոշակառուի թերվճարված գումարները, դադարեցվել է 17-18 հազար «ոչ առկա» անձանց կենսաթոշակների վճարումը:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Կառուցվեց նոր ջրագիծ



Նոր Խարբերդ եւ Նոր Կյուրին գյուղերին ջուր մատակարարող խողովակաշարը, որը սկիզբ էր առնում «Գառնի-Երեւան» մայրուղային ջրատարից, կառուցվել էր տասնամյակներ առաջ եւ գտնվում էր տեխնիկապես անմխիթար վիճակում:

Վթարներն այստեղ շարունակական էին, ինչը ոչ միայն ջրի կորուստ էր առաջացնում, այլեւ՝ վտանգում ջրի որակը:

Հաշվի առնելով տվյալ հանգամանքը, «Երեւան Ջուր» ՓԲԸ-ն որոշում էր կայացրել նոր խողովակաշարի կառուցման վերաբերյալ՝ 13,7 մլն դրամ ընդհանուր արժեքով: Հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող էր ճանաչվել «Շինմաստեր» ՍՊԸ-ն, որին եւ հանձնարարվել էր կառուցել 240 մետր երկարությամբ, 315 մմ տրամագիծ ունեցող նոր խողովակաշար պոլիէթիլենից:

Ինչպես տեղեկացրեց ընկերության Շինարարական աշխատանքների համակարգման բաժնի աշխատակից Արմեն Մովսիսյանը, այդ ընթացքում որոշակի դժվարություններ են առաջացել՝ կապված բարդ տեղանքի /ջրատարն անցնում է ձորով/ եւ եղանակային պայմանների հետ: Ի վերջո, օգտվելով վերջին բարենպաստ օրերից, «Շինմաստերը» կարողացել է աշխատանքներում ներգրավել համապատասխան տեխնիկա եւ ապրիլի 4-ին ավարտել նորակառույց խողովակաշարի միացման աշխատանքները, մի կողմից՝ «Գառնի-Երեւան» մայրուղային ջրատարին, մյուսից՝ Նոր Խարբերդ եւ Նոր Կյուրին գյուղերի ներքին ցանցին:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

## Նրանք այլ ցուցակում են՝ սեւում

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ամփոփել է մարդկանց տեղեկատվություն ստանալու իրավունքը 2012թ. առաջին եռամսյակի ընթացքում խախտածների ցուցակը:

Նրանք երկուսն են:

1. Վոլոդյա Խլոյան-Վարդենիսի քաղաքապետ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ. փետրվարի 17-ին ուղարկված գրավոր հարցմամբ Վարդենիսի քաղաքապետից խնդրել էր տեղեկություններ՝ Վարդենիս քաղաքի բյուջեով ձյան մաքրման աշխատանքների համար նախատեսված եւ հատկացված գումարների վերաբերյալ: Քաղաքապետարանը հարցմանը չի պատասխանել: ԻԱԿ-ը 2012թ. մարտի 15-ին կրկնակի հարցում է ուղարկել քաղաքապետին, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան:

2. Սամվել Դարբինյան-Վանաձորի քաղաքապետ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ. փետրվարի 21-ին ուղարկված տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ՝ Վանաձորի քաղաքապետից խնդրել էր տեղեկություններ Վանաձոր քաղաքի բյուջեով ձյան մաքրման աշխատանքների համար նախատեսված եւ հատկացված գումարների վերաբերյալ: Քաղաքապետը Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցմանը չի պատասխանել: ԻԱԿ-ը 2012թ. մարտի 15-ին կրկնակի հարցում է ուղարկել քաղաքապետին, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան:

Ռ. Մ.

## Ձայների «պլան» են դրել

Հետաքրքիր տեսարանի ականատես եղավ «Առավոտի» թղթակիցը: Տավուշի մարզի բնակչին զանգահարեց Երեւանի բիզնես կառույցներից մեկի անվտանգության ծառայությունում աշխատող նրա որդին: Այդ «օբյեկտի» տերը Հայաստանի բարձրաստիճան ղեկավարներից է: Երիտասարդը ծնողին ասաց, որ իրենից աշխատավայրում 15 «ձայն են ուզել», այլապես սպառնալով աշխատանքից ազատել: «Ձայները» ՀՀԿ-ի համար են: Երիտասարդը ծնողին հայտնեց, որ պետք են 15 հոգու անձնագրային տվյալները:

«Չեմ կարող, առանց փողի ձայն չեմ տալու, ահագին պարտքեր ունեմ»,- առարկեց երիտասարդի ծնողը, որը գործազուրկ է: Երիտասարդի, բիզնես կառույցի եւ նրա ղեկավարի անունները չեմ նշում՝ մտավախություն ունենալով, որ դրա համար կարիքավոր ընտանիքի տղային կզրկեն աշխատանքից: Իսկ այդ աշխատանքում նա դժվարությամբ է տեղավորվել եւ Հայաստանի չափանիշներով «նորմալ» աշխատավարձ է ստանում:

ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Ամեն ավագ ուրբաթ օրը չեն աշխատի

Ավագ ուրբաթը «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի աշխատակիցների համար այսուհետեւ ոչ աշխատանքային օր է լինելու: Այս տարի ավագ ուրբաթը ապրիլի 6-ն է, ուստի ընկերության աշխատակիցները այդ օրը չեն աշխատի:

Ծաղկազարդը, որով սկսվում է Սբ. Հարության տոնին նախորդող ավագ շաբաթը, այս տարի նշվեց ապրիլի 1-ին:

Ավագ հինգշաբթին, որն այս տարի նշվում է ապրիլի 5-ին, նվիրված է վերջին ընթրիքին: Այդ օրվա երեկոյան կատարվում է Խավարման կարգ, որը վերաբերում է ավագ ուրբաթին՝ խորհրդանշելով Տիրոջ խաչելությունը:

Ավագ ուրբաթ օրվա ընթացքում տեղի է ունենում Խաչելության կարգ: Երեկոյան ժամերգությունից հետո կատարվում է Թաղման կարգ, երբ Հիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը՝ զարդարված ծաղիկներով եւ ծառի ճյուղերով, պտտում են եկեղեցու շուրջը:

Շաբաթ՝ ապրիլի 7-ին, Հայ առաքելական եկեղեցին կնշի իր ամենակարեւոր տոներից մեկը՝ Սբ. Աստվածածնի ավետումը: Ավետման տոնը հռչակվել է մայրության օրհնության օր. բոլոր եկեղեցիներում այդ օրն Օրհնության կարգ է կատարվում: Ավագ շաբաթը, որը կոչվում է նաեւ Ճրագալույցի Զատիկ, խորհրդանշում է Հիսուսի կողմից դժոխքի ավերումը եւ արդար հոգիների ազատումը: Ավագ շաբաթի պատարագով մենք սկսում ենք Սբ. Զատկի տոնակատարությունը՝ միմյանց ողջունելով «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով եւ պատասխանելով՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Կիրակի՝ ապրիլի 8-ին, մենք կնշենք Հիսուս Քրիստոսի Հարության տոնը, իսկ եկեղեցիներում կմատուցվի Սբ. Պատարագ: Հիսուս Քրիստոսի հարությունը քրիստոնեական հավատքի հիմքն է եւ խորհրդանշում է կյանքի եւ լույսի հաղթանակը մահվան եւ խավարի հանդեպ: Տոնը նաեւ կոչվում է Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված: Զատիկը հինգ տաղավար տոներից մեկն է:

Հայի ինքնության եւ քրիստոնեության օրրան Հայաստանի հանդեպ մեր նվիրումը ստիպում է ջանալու պահպանել եւ հանրության շրջանում տարածել մեր կրոնի տոներն ու հիշատակության օրերը:

Սեփական պատմության ճանաչումը դեպի ապագա տանող լավագույն ճանապարհն է:

# ԱՄՆ-ում հետաքրքրվել են Չարենցով

**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Եղիազարյանը վերջերս է վերադարձել ԱՄՆ-ից, որտեղ հանդես է եկել չարենցյան դասախոսություններով: Գրականագետը պատասխանեց «Առավոտի» հարցերին:**



Ազատ Եղիազարյանը՝ պրոֆեսորներ Ռիչարդ Հովհաննիսյանի, Պիտեր Քաուիի եւ դասախոսության ունկնդիրների հետ:

- Ո՞ր համալսարաններում հանդես եկաք դասախոսություններով եւ ի՞նչ տպավորություններ ունեք:

- Հրավերները ստացվել էին Բերկլիի, Կալիֆոռնիայի (UCLA) եւ Ան Արբորի (Միչիգան) համալսարաններից: Օրինակ՝ Բերկլիում Չարենցին նվիրված սիմպոզիում էր կազմակերպված՝ «Եղիշե Չարենց՝ ողբերգական հեղափոխականը» թեմայով, որի ընթացքում 3 զեկուցում լսվեց՝ իմ, Վարդան Մաթեւոսյանի (Նյու Յորք), Ջեյմս Ռասելի (Հարվարդի համալսարան): Ես խոսեցի դեպի հեղափոխություն Չարենցի ճանապարհի առանձնահատկությունների մասին: Վարդանի թեման էր՝ «Նաիրիի վերջին երգիչը», իսկ Ռասելը մանրամասն խոսեց «Գիրք ճանապարհի», եւ դրա կոչոյանական նկարազարդումների մասին: Ինչպես Բերկլիի, այնպես էլ մյուս երկու համալսարաններում լսարանը հիմնականում հայկական էր, բայց ներկա էին ամերիկացիներ, չինացիներ եւ այլ ազգերի ներկայացուցիչներ: Լոս Անջելեսում կարդացի չորս դասախոսություն՝ «Եվրոպական մթնշաղը: Անհատի ճակատագիրը», «Հայաստանը Չարենցի պոեզիայում», «Չարենցը եւ հեղափոխությունը», «Ազգային եւ ազգայնապաշտությունը Չարենցի ստեղծագործության մեջ» թեմաներով: Ան Արբորում էլ խոսեցի «Չարենցը եւ հեղափոխությունը» թեմայով: Այս վերջին դեպքում թեմայի ընտրությունը ես էի կատարել, այն համոզմամբ, որ այդ խնդրի լուսաբանությունը կարեւոր է Չարենցի ամբողջ ստեղծագործությունը հասկանալու համար: Չարենցին նվիրված միջոցառումների ընթացքում երկու անգամ ցուցադրվեց մի փաստագրական ֆիլմ, որը նկարահանել է Շերին Անդերսոնը: Պետք է շնորհակալ լինել այդ կիսահայ տիկնոջը ֆիլմը նկարելու համար: Մյուս կողմից էլ՝ այդ ժամանակսանոց նկարը այնքան մակերեսային էր եւ այնքան քիչ բան էր ասում Չարենցի մասին, որ մնում էր միայն ափսոսալ:

- Ի՞նչ հարցեր Ձեզ ուղղվեցին, հատկապես ի՞նչն էր հետաքրքրում օտարերկրացիներին:

- Անտարբեր ունկնդիրների ոչ մի լսարանում չհանդիպեցի: Շատ էին հարցերը հատկապես Չարենցի կյանքի վերջին շրջանի մասին: Ան Արբորում ունկնդիրներին հետաքրքրում էր Չարենցի եւ հեղափոխության խնդիրը: Այս հետաքրքրությունը ինձ ստիպում է մի անգամ եւս փաստել, որ հայաստանյան եւ դրսի, հատկապես օտարալեզու մասնագետների ու ունկնդիրների հանդիպումները երկուստեք կարեւոր են: Մարդիկ երբեմն մոտավոր պատկերացում ունեն մեր գրականության մասին, երբեմն էլ՝ ոչինչ չգիտեն: Հիշում եմ՝ երկու տարի առաջ նույն թեմայով դասախոսություններ էի կարդում Օքսֆորդի համալսարանում: Վերջում ինձ մոտեցավ մի ռուս աղջիկ եւ ասաց, որ դասախոսություններից հետո ինտերնետում գտել է Չարենցի ռուսերեն թարգմանությունները եւ բոլորը կարդացել...

- Խնդրում եմ զուգահեռներ տանեք հայաստանյան եւ ամերիկյան համալսարանների միջեւ (լավ եւ վատ կողմերը):

- Շատ հետաքրքիր թեմա է: Վատի մասին դժվարանում եմ խոսել, որովհետեւ այդ համալսարանների ներքին կյանքը լավ չգիտեմ: Կարող եմ ասել, որ, օրինակ, ինձ դուր չի գալիս այն թափթփվածությունը, որը բնորոշ է ուսանողների մեծ մասի արտաքինին: Բայց սրանով չես կարող դատել այդ հայտնի համալսարանների մասին: Նրանց ամենամեծ առավելությունը լավ մասնագետներ հավաքելու եւ նրանց պահելու ձգտումն ու կարողությունն է: Չեմ խոսում գեղեցիկ շինությունների եւ կանաչապատ համալսարանական ավանների մասին, մի բան, որ չունեն, մեր բուհերը...Այս պահին Ան Արբորում երեք երիտասարդ հայաստանցի մասնագետ կա, վստահ եմ՝ լավ գիտնականներ են: Ցավոք, նրանցից ոչ ոք իր ապագան երեւանյան բուհերի հետ չի կապում:

Դառնալով Չարենցին՝ հավելեմ, որ այս տարին եռակի հոբելյանական է բանաստեղծի համար՝ ոչ միայն ծննդյան 115-ամյակն է, այլեւ առաջին բանաստեղծության տպագրության 100-ամյակը եւ մահվան 75-ամյակը: Այդ տարեթվերը պետք է առիթ լինեն ոչ այնքան պաթետիկ եւ երբեմն շատ մակերեսային խոսակցությունների, որքան Չարենցի ստեղծագործության մասնագիտական խոր քննության:

Զրուցեց ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆԸ

# «Իսահակյան» գրախանութ՝ համանուն գրադարանում

Երեւանյան հատուկենտ գրախանութները ապրիլի 20-ին կհամալրվեն եւս մեկով: Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում կբացվի «Իսահակյան» գրախանութը: «Առավոտն» այս առիթով հանդիպեց նշյալ գրադարանի տնօրեն Հասմիկ Կարապետյանին: Նա տեղեկացրեց, որ այդ օրը կենտրոնական գրադարանի բակում կկայանա Գրքի պուրակի հիմնարկեքը, որտեղ մշակույթի եւ գրականության հայտնի դեմքեր կտնկեն ծառեր իրենց անունով: Հավելեց նաեւ, որ այդ օրը հիմնադրվելու է «Երեւանյան գրքի ակումբը»:

Մեր զրուցակիցը հայտնեց, որ մինչեւ սեպտեմբեր իր տնօրինությամբ գործող գրադարանի մասնաճյուղերում (Կիեւյան 1, Տիգրան Մեծի 30 եւ Մոսկովյան 31 հասցեներում) կբացվեն եւս 3 գրախանութներ: Հետաքրքրվեցինք՝ արդյոք թվարկված միջոցառումները Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակման եւ հայկական գրատպության 500-ամյակի շրջանակներո՞ւմ են եւ ինչպե՞ս է պատկերացնում այսօր հրատարակված իսկապես բարձրորակ ու նոխ գրքերի վաճառքը, մանավանդ որ՝ դրանք ունեն նաեւ «նոխ» գին: Տիկին Կարապետյանը ասաց, թե ցանկացած խնդրի լուծում պահանջում է ամենօրյա հետեւողական աշխատանք, ինչը չպետք է կապել որեւէ տոնակատարության կամ հոբելյանի հետ, հետո էլ հավելեց. «Հասկանալի է, որ պետության գերխնդիրը ժողովրդի սոցիալական հարցերն են, սակայն չպետք է մոռանալ, որ նույն ժողովուրդը չի կարող գոյատեւել առանց հոգեւորի»: Տնօրենը հայտնեց նաեւ, որ օրախնդիր անհրաժեշտություն է պետական կառույցներում ընդունելու ընթերցանության աջակցման եւ զարգացման ազգային ծրագիր, որն իր մեջ կներառի գրադարանները, կրթության համակարգը, գրահրատարակչությունը, կադրերի պատրաստումը, ընթերցանության մասսայականացումը՝ սկսած մանկապարտեզից:

Հասմիկ Կարապետյանը տեղեկացրեց նաեւ, որ օրերս լուր է ստացվել, թե կառավարությունը պատրաստվում է մշակելու ընթերցանության աջակցման եւ զարգացման ազգային ծրագիր, հույս հայտնելով, որ հավանաբար առաջիկայում այն կիրականացվի փուլ առ փուլ: Մեր զրուցակիցն ասաց, որ մայիսից իրենք՝ հանրապետությունում առաջինը, անցնում են ընթերցողների էլեկտրոնային սպասարկման եւ գրադարանային գործառույթների ավտոմատացման: «Մինչեւ տարեվերջ համակարգը կներդրվի մեր գրադարանում եւ 10 մասնաճյուղերում: Ընթերցողը կարող է տնից գիրք պատվիրել ու ստանալ հրավեր: Գրասերը կարող է ինքնուրույն ընտրություն կատարել գրականության ֆոնդերում եւ գրադարանի էլեկտրոնային բազաներում: Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը նվիրել է էլեկտրոնային գրքեր»,- հայտնեց տիկին Կարապետյանը: Մտահոգությանը, թե էլեկտրոնային գիրքը հնարավոր է՝ ամենամոտ ժամանակներում դուրս մղի «ֆիզիկական» գրքին, տնօրենը նշեց, թե մարտ ամսին իրենց գրադարան օրական այցելել է միջինը 1097 այցելու, հետո էլ պատասխանեց. «Ֆիզիկական» գիրքը ֆոնդերում կշարունակի մնալ եւ համալրել այն իբրեւ մշակութային ժառանգության կարեւոր մաս, իսկ զուգահեռաբար թվային գրադարաններն ու էլեկտրոնային գրքերը կդառնան գրադարանի ֆոնդային հարստության մասը»:



ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Դիմորդներն ավելացել են

**Ֆիզիկա, մաթեմատիկա, հայոց պատմություն հանձնողները՝ քչացել**

Մեր երկրում առաջացած աժիոտաժով ընտրությունների հետ կարող են համեմատվել բուհական ընդունելության քննությունները: Հունիսին մեկնարկվող միասնական քննություններն արդեն մտել են նախաքննական փուլ: Այս տարի քննությունների անցկացման կարգում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք, ըստ ՀՀ կառավարության աշխատակազմի Գնահատման եւ թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) մամուլի խոսնակ Գայանե Մանուկյանի, ներկայացվել են կառավարության հաստատմանը: «Մենք 1995թ. եւ հետագա տարիներին ավարտած շրջանավարտների վերաբերյալ որոշակի սահմանափակումներ էինք ժառանգություն ստացել, ինչը պարզեցնելու փորձ է կատարվել: Եթե դիմորդն ատեստատում որեւէ առարկայից չունի ավարտական քննության գնահատական, ընդունելության ժամանակ արդեն կարող է հիմք ընդունվել տարեկան գնահատականը: Դա օգնում է ոչ միայն նախկին շրջանավարտներին, որոնք տարիներ անց ցանկանում են երկրորդ մասնագիտությունը ստանալ, այլեւ այն շրջանավարտ-դիմորդներին, ովքեր ցանկություն ունեն ուսումը շարունակելու ագրարային, ճարտարագիտական կամ այլ համալսարաններում, որտեղ երկու ատտղանիշով առարկաներ են նշված»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց Գայանե Մանուկյանը: Փոփոխությունը ենթադրում է, որ երկու աստղանիշով մասնագիտությունների դեպքում տվյալ առարկայից կարող է հիմք ընդունվել նաեւ դպրոցի տարեկան գնահատականը:

Եվս մեկ փոփոխություն, որի մասին «Առավոտը» տեղեկացրել էր նախորդ համարներում. կառավարության հաստատած քննությունների ցանկում օտար լեզուների թվում ավելացել է ռուսերենը: Այս փոփոխությունից հետո, ըստ մեր զրուցակցի, մոտ 200-ով ավելացել է ռուսերեն քննություն հանձնել ցանկացողների թիվը:

Մեկ այլ փոփոխության համաձայն (որը կատարվել է ԱԺ ՀՅԴ խմբակցության առաջարկով համապատասխան օրենքի ընդունումից հետո)՝ 8 եւ ավելի տարիներ սահմանամերձ, բարձրլեռնային բնակավայրերում ապրող դիմորդը բուհերի ընդունելությանն առանձին մրցույթով է մասնակցում եւ, դրական գնահատական ստանալու դեպքում, ընդգրկվում անվճար ուսուցման համակարգում:



Այս տարի, ի տարբերություն նախորդ տարիների, անցկացվելու է նաեւ լրացուցիչ մրցույթ: Երբ փակցվեն ընդունվածների ցուցակները, մրցույթից դուրս մնացած, բայց դրական միավորներ ստացած դիմորդները հնարավորություն կունենան մասնակցել թափուր տեղերի համար մրցույթին:

Հավելենք, որ ԳԹԿ-ն մարտի 15-ին ավարտել է միասնական եւ կենտրոնացված քննությունների հայտագրման գործընթացը, եւ այժմ ընթանում է տվյալների բազավորման ու ճշգրտման փուլը: Դիմորդներն իրենց հայտերում կարող են փոփոխությունները կատարել մինչեւ ապրիլի 10-ը: Գայանե Մանուկյանը փոխանցեց որոշ նախնական տվյալներ՝ դիմում-հայտերի վերաբերյալ. եթե 2010-ին կար 17500 դիմորդ, այս տարի այդ թիվը շուրջ 18100 է: Ավելի շատ դիմորդ ունենք Արցախում, ավելացել է դիմորդների թիվը Տավուշում, Սյունիքում: Այս տարի փոքր-ինչ ավելացել են քիմիա, կենսաբանություն քննություն հանձնողները, նվազել է ֆիզիկա, մաթեմատիկա, հայոց պատմություն հանձնողների թիվը:

Գ. Հ.

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 5.04.2012

VivaCell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Մրցավարներն էլ օլիմպիական վարկանիշային մրցապայքար են անցնում

## Ընբշամարտում օլիմպիական երեք վարկանիշ ունենք. երկու ըմբիշ եւ մեկ մրցավար

Հայաստանն առայժմ Լոնդոնի օլիմպիական խաղերի ըմբշամարտի մրցաշարի երեք մասնակից ունի. ըմբիշներ Արսեն Ջուլֆալակյանն ու Միհրան Ջաբուրյանը եւ մրցավար Սամվել Հարությունյանը:

Սամվել Հարությունյանն այսօրվա դրությամբ հայաստանցի միակ մրցավարն է, որ օլիմպիական խաղերը սպասարկելու պաշտոնական թույլտվություն է ստացել: ՄՕԿ-ն աշխարհի 60 լավագույն մրցավարներին ընտրել է լուրջ սելեկցիա անցկացնելով: Թե ի՞նչ ճանապարհ է անցել հայ մասնագետը, «Առավոտը» տեղեկացավ նրա հետ զրույցում:

- Երբվանի՞ց է սկսվել մրցավարների օլիմպիական քննությունը:

- Եթե ճիշտն ասենք, դա սկիզբ ու վերջ չունի: ՖԻԼԱ-ի հովանու ներքո անցկացվող ամեն մի առաջնություն քննական է, որի ընթացքում աստիճանաբար զատվում են այն մրցավարները, որոնց ՖԻԼԱ-ն սկսում է ավելի ուշադիր հետեւել: Իսկ եթե ավելի ստույգ պատասխանեմ ձեր հարցին, հիմնական սելեկցիայով ՖԻԼԱ-ն սկսել է զբաղվել Ռումինիայում կայացած աշխարհի երիտասարդական եւ այս տարվա մարտին Բելգրադում անցկացված Եվրոպայի մեծահասակների առաջնություններում:

- Դուք այդ երկու առաջնություններում էլ մրցավար էիք:

- Այո: Ռումինիայում առաջին օրը ես գորգի մրցավար էի: Հաջորդ օրն ինձ նշանակեցին արդեն գորգի ղեկավար, իսկ երրորդ օրվանից մինչեւ առաջնության ավարտը՝ ժյուրիի անդամ: Դժվար չէ ենթադրել, թե ինչու: Ես չէ, որ պիտի գնահատեմ ինձ: Դա արեց ՖԻԼԱ-ն:



Երկրորդ քննությունը, որն ավելի խիստ էր, Եվրոպայի մեծահասակների առաջնությունն էր, որտեղ սցենարը գրեթե նույնությամբ կրկնվեց: Առաջին օրը կրկին գորգ, իսկ երկրորդ օրվանից մինչեւ վերջ ՖԻԼԱ-ի նախագահի կարգադրությամբ կատարեցի «B» գորգի ղեկավարի պարտականությունը:

- Գորգում աշխատե՞լն է ավելի դժվար, թե՞ գորգի ղեկավար կամ ժյուրիի անդամ լինելը:

- Երկուսն էլ հավասարապես դժվար ու պատասխանատու աշխատանք են: Գորգում ահավոր լարված ես լինում, երբ գիտակցում ես, որ քո ամեն մի շարժմանը հազար աչք է հետեւում եւ յուրաքանչյուր վճիռդ կարող է ճակատագրական լինել թե գոտեմարտող ըմբիշների եւ թե քեզ համար: Շատերն այդ հոգեբանական լարվածությանը չեն դիմանում: Իսկ երբ գորգի պատասխանատու ես կամ ժյուրիի անդամ, վիճելի իրավիճակներում պետք է կարողանաս կատարել միակ ճիշտ ու արդար որոշումը, ինչը նույնպես հեշտ գործ չէ:

- Բարձրակարգ մրցավարներ շատ կան: Բայց հատուկենտ մասնագետների է հաջողվում օլիմպիական մրցավարի կարգ ստանալ: Ձեր պարագայում ո՞րն է գաղտնիքը:

- Իմ բոլոր հաջողությունների համար պարտական եմ իմ ուսուցչին՝ ՖԻԼԱ-ի կոորդինատոր եւ մրցավարական հանձնաժողովի նախագահ Ստեփան Ղազարյանին, որի խորհուրդներն ինձ համար միշտ էլ անգնահատելի են: Միջազգային պաշտոնական մրցումներում երկուսս էլ ներկա ենք լինում: Ու ամեն անգամ նա ինձ մատնացույց է անում թույլ տված վրիպումները, հուշում, թե ինչը՝ ինչպես կատարեմ: Մեր հարցազրույցներից մեկում ես մի օրինակ էի բերել: Պարոն Ղազարյանն ինձ սովորեցրել է, որ մրցավարը գորգում ամեն մի շարժում կատարելիս, կամ որոշում կայացնելիս դա պետք է անի վստահ, հստակ, նույնիսկ՝ արտիստիկ ժեստերով: Հավատացնում եմ, որ այդ դեպքում խնդիրներ գրեթե չեն առաջանում:

- Բայց եթե վճիռը սխա՞լ է:

- Սխալներից, առավել եւս՝ վրիպումներից ոչ ոք ապահովագրված չէ: Նայած՝ թե դրանք ինչպիսին են: Եթե կոպիտ սխալներ ես գործում, օլիմպիական խաղերի մասին կարող ես մոռանալ: Դրա լավագույն օրինակը Ռոման Ամոյանի գոտեմարտն է, որից հետո թե գորգի, թե կողային մրցավարները որակազրկվեցին, թեեւ համապատասխան բարձր որակավորում ունեին:

- Սա մրցավար Սամվել Հարությունյանի երկրո՞րդ օլիմպիական խաղերն է:

- Այո: Նորամուտս եղել է Պեկինում: Անկեղծ ասած, Աթենքում էլ պետք է մրցավարեի, բայց գտնվեցին մարդիկ, որոնք խանգարեցին:

- Հուսով եմ, Հայաստանից կամ հայ չէին:

- Ոչ-ոչ: Կանադացի էր: Հայերս միշտ էլ իրար օգնում ու աջակցում ենք: Մեր մեջ այդպիսի խնդիրներ չկան:

- Ձեր երազանքները կատարվե՞լ են:

- Լրիվ: Եվ Աստծուն շնորհակալ եմ: Այս տարի զույգ տղա թոռնիկներ ունեցա: Եվ երկրորդ՝ ինչպես մարզիկներն են երազում երբեւէ մասնակցել օլիմպիական խաղերին, այնպես էլ՝ մրցավարները: Եվ նրանք նույնպես բազմաթիվ արգելքներ են հաղթահարում օլիմպիական վարկանիշ ստանալու համար: Ես կարողացա:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

### Ըստ Աշոտյանի, ռուսերենից հրաժարվելն ինքնասպանություն է

Երեկ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում տեղի ունեցավ հանրակրթական ուսումնական հաստատությունների ռուսաց լեզվի ուսուցիչների երկրորդ համագումարը, որին մասնակցում էին ուսուցիչներ՝ Հայաստանի բոլոր մարզերի եւ մայրաքաղաքի դպրոցներից: Համագումարին ներկա՝ ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոն լրագրողների հետ զրույցում նշեց, որ ռուսերենը նպաստում է հայ-ռուսական հարաբերությունների զարգացմանը. «Հայն իմաստուն ազգ է եւ գիտակցում է երկլեզու հաղորդակցության կարեւորությունը՝ եվրոպական ինտեգրման ճանապարհին»: Խոսելով Հայաստանում ռուսերենի զարգացման խնդիրներից՝ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը նշեց, որ դասավանդման գործընթացում առանձնակի խնդիրներ չկան: «Ռուսերենը հարստություն է, որից հրաժարվելն ինքնասպանություն է: Հաճախ հարցը փորձում են քաղաքականացնել, ինչը թույլատրելի չէ: Մեր նախարարությունը քննադատում է այդ մոտեցումը, քանի որ ռուսերենը քաղաքակիրթ զարգացման մի մասն է կազմում»,- ասաց ԿԳ նախարարը: Ա. Աշոտյանը նկատեց, որ Հայաստանի համար Ռուսաստանը գործընկեր է հանդիսանում ոչ միայն քաղաքական եւ էկոնոմիկայի, այլեւ կրթական ոլորտում. «Պատահական չէ, որ կրթական ոլորտում տարեցտարի ավելանում են ռուսերենի զարգացմանն ուղղված ծրագրերը: Կրթություն ստանալ ցանկացող յուրաքանչյուր հայի համար կարեւոր է ազգային կրթությունից բացի, նաեւ ստանալ ռուսերենի եւ այլ օտար լեզուների համապատասխան գիտելիքներ»:

Համագումարի ընթացքում Ա. Աշոտյանի կողմից ԿԳՆ պատվոգրերով պարգեւատրվեցին Երեւանի եւ մարզերի մի շարք դպրոցների ուսուցիչներ՝ ռուսերենի զարգացման գործում մասնագիտական ներդրման համար:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# Ընտանիքը միայն տղամարդու եւ կնոջ միավորում չէ

## Այս կարծիքին է PINK հասարակական կազմակերպության նախագահ Մամիկոն Հովսեփյանը

Միասեռական ամուսնության իրավունքը չի դասվում մարդու իրավունքների շարքին, ուստի նման հնարավորություն չտվող կամ այն արգելող պետությունները չեն խախտում մարդու իրավունքները. ահա այսպիսին է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Ստրասբուրգ) վերջերս կայացրած վճիռը: Դա հաստատումն է 2010թ. նախադեպի, երբ նույն այդ դատարանն իր վճռով որոշեց, որ Ավստրիան չի ոտնահարում մարդու իրավունքները՝ մերժելով գրանցել միասեռական ամուսնությունները:




Դատարանի որոշման մեջ նաեւ նշվում է, որ պետությունը պարտավոր չէ միասեռական զույգերին տալ նույն իրավունքները, որոնք տրվում են տարասեռ ընտանիքներին: Դատարանի այդ որոշումը շատ լուրջ փաստարկ է հանուն ընտանեկան արժեքների եվրոպացիների պայքարում, քանի որ իր վճռով Եվրոպական դատարանը, փաստորեն, ընդունել է, որ ընտանիքը բացառապես տղամարդու եւ կնոջ միություն է, այլ ոչ թե երկու տղամարդկանց կամ երկու կանանց միություն:

Թեմայի վերաբերյալ «Առավոտը» զրուցեց «Հանրային տեղեկատվության եւ գիտելիքի կարիք» (PINK) հասարակական կազմակերպության նախագահ Մամիկոն Հովսեփյանի հետ, որին մտահոգում են միասեռականներին վերաբերող խնդիրները: Մ. Հովսեփյանի ձեւակերպմամբ՝ «Ընտանիքը ոչ միայն տղամարդու եւ կնոջ միավորում է, այն կարող է լինել մայր ու զավակ, տատիկ ու թոռ, քույր ու եղբայր եւ այլն: Սխալ է այն բացատրությունը, երբ ասում են՝ ընտանիքը դա հայր, մայր, զավակներ, տատիկ ու պապիկ միավորումն է: Երբ վերոնշյալ անդամներից մեկը կամ մի քանիսը բացակայում են կամ տվյալ ընտանիքում տարբեր պատճառներով երեխաներ չեն ծնվել, այդ ընտանիքը կրկին ընտանիք է»:

Ինչու չէ, դատարաններն էլ են երբեմն ծայրահեղական լինում, ասում է Մ. Հովսեփյանը, հավելելով, որ մարդու իրավունքները հստակ սահմանված են տարբեր հռչակագրերում եւ այնտեղ հենց շեշտադրվում է ո՛չ խտրական վերաբերմունքը՝ անկախ անձի կողմնորոշումից եւ այլ հանգամանքներից:

«Մեկ այլ տեսակետից կնայեմ այս հանգամանքին. փաստորեն, նրանք, ովքեր դեմ են նույնասեռ ամուսնություններին, ցանկանում են, որ գեյն ամուսնանա իրենց դստե՞ր կամ քրո՞ջ հետ, իսկ լեսբուհին՝ զավակի՞ կամ եղբո՞ր»,- նշում է PINK-ի նախագահը՝ ավելացնելով, որ, եթե նույն կառույցները հստակ բացատրություն ունեն, թե ինչու են մերժում նույնասեռ ամուսնությունները եւ ինչով է դա վնաս կամ վատ, թող հստակ մեկնաբանեն:

«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 12-ն ասում է. «Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ եւ կանայք ունեն ամուսնանալու եւ ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան»:

Ինչպես բազում այլ հռչակագրերում եւ տարբեր երկրների սահմանադրություններում, այնպես էլ ՀՀ սահմանադրության հոդված 35-ում նշվում է, որ ամուսնական տարիքի հասած կինը եւ տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնության ու ընտանիք կազմելու իրավունք: Ինչպես Եվրոպական կոնվենցիայում, այնպես էլ մեր Սահմանադրությունում չի նշվում, որ միայն տարասեռ զույգերն իրավունք ունեն ամուսնության»,- հավելեց Մ. Հովսեփյանը՝ շեշտելով, որ, այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ անձի սեռական կողմնորոշումը անձի ընտրությունն է, իսկ ցանկացած անձ իրավունք ունի լիարժեք ապրել իր կյանքը՝ անկախ նրանից, թե նա ունի հասարակության կողմից չընդունված կողմնորոշում, սոցիալական անկայուն վիճակ, հաշմանդամություն, անպտղություն կամ չի համապատասխանում մեր կարծրատիպերին ու նորմերին:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ